

laomi Redmi 5A
 Բաշխարհ
2200+



ENERGY Երբ առավելություններն անսպառ են...
 060 46 46 46
 www.florinda.am

29 03 2018

EUR 589.19 GBP 671.23
 RUB 8.52 USD 481.17

ցերեկ 23°C
 գիշեր 11°C

ՀԱՅ PYG ENG

Որոնում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԲՅՈՒՐԸ

ԼՈՒԻՒՐԸ ԶՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՄ ԾԱՆՎՈՒԹՅՈՒՆ ԱՊՈՐՏ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



panorama.am

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 17:44 15/03/2018 ՀԱՅԱՍՏԱՆ

Երևանի ՋԷԿ նոր Էներգաբլոկը 2018 թ. կհագեցվի գազատուրբինների նորագույն ձեռքբերումներով

Երևանի ՋԷԿ նոր Էներգաբլոկի 2018 թ. արդիականացման ծրագրերի արժեքը կկազմի շուրջ 15 մլն ԱՄՆ դոլար: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ տեխնիկական տնօրեն Արկաղի Գևորգյանը: Երևանի ջերմային էլեկտրակայանի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող Էներգաբլոկի կառուցման համար ճապոնիայի կառավարությունը հատկացրել է ավելի քան 220 մլն ԱՄՆ դոլար:

Էներգաբլոկի կառուցման ծրագիրը, մասնավորապես՝ շինարարական աշխատանքները մեկնարկել են 2008 թ., ծրագրի իրականացումն ավարտվել է 2010 թ.: Նույն 2010 թ. ապրիլ ամսից այն գործարկվել է և միացվել ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգին: Գևորգյանը նշեց, որ 8 տարիների աշխատանքի արդյունքում արտադրվել է շուրջ 12 միլիարդ կվ/ժ էլեկտրաէներգիա, Էներգաբլոկի դրվածքային հզորությունը կազմում է 240 մեգավատտ:

Ճապոնական միջազգային համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ՝ Էներգաբլոկի կառուցման ժամանակակից տեխնոլոգիական բոլոր լուծումներն են իրականացվել՝ և ավտոմատ կառավարման առումով, և տեխնոլոգիական բոլոր նոր ձեռքբերումներով: Գևորգյանը նշեց, որ այս Էներգաբլոկը Էներգահամակարգի ջերմային կայանների մեջ համարվում է ամենաարդյունավետը, քանի որ կոմպենսացիոն ցիկլի ՕԳԳ-ն կազմում է շուրջ հիսուն տոկոս:

«Եթե կլինի այն օրը, որ մենք կունենանք նաև ջերմային Էներգիայի սպառում, Էներգաբլոկը նախատեսված է նաև ջերմաֆիկացիոն ուժեղացման աշխատելու համար, և այդ դեպքում ՕԳԳ-ն դառնում է շուրջ 73-74 տոկոս: Այն աշխատում է բնական գազով, հիմնական սարքավորումները, գազատուրբինային տեղակայանքը շվեյցարական արտադրության է, իսկ շոգետուրբինային տեղակայանքը՝ ճապոնական «Ֆուջի» ընկերության, գազատուրբինը՝ 180 մՎտ, շոգետուրբինը՝ 63 մՎտ հզորությամբ», - ասաց նա:

Գևորգյանը նշեց, որ կայանքը շահագործման ընթացքում պարբերաբար ենթարկվում է տեխնիկական սպասարկման՝ գործարանային և տարբեր տեխնիկական նորմատիվ փաստաթղթերի համապատասխան:

2018 թ. նախատեսվում է Էներգաբլոկի կապիտալ նորոգման ընթացքում իրականացնել նաև գազատուրբինային տեղակայանքի «Յնիթսել 2» մոդեռնիզացիան, որը այդ գազատուրբինների համար վերջին ձեռքբերումներով՝ տեխնիկական նորամուծություններով է հագեցած: Դրա արդյունքում կլինի շուրջ 7 մՎտ հզորության ավելացում և 1 տոկոս ՕԳԳ ավելացում, այսինքն՝ ավելի շահավետ կլինի Էներգաբլոկի աշխատանքը:

ԼՐԱՅՈՒ

- 14:24 Այսօր Լոբջան Դավիթը որևէ խնդիր չունի. նախարարն իր պաշտոնանկության մասին
- 14:22 Նախագահը ներկա է գտնվել «ԱրմՀայթեք-2018» միջազգային ցուցահանդեսի բացմանը
- 14:20 ԾՈ Կոտայքի բաժանմունքում արդեն 3-րդ անգամ կաշառքով վարորդական իրավունքի վկայական են տրամադրում
- 14:14 Ռուսաստանը վարկային նոր համաձայնագրով Հայաստանին զենքի մատակարարումը կսկսի այս տարի
- 14:00 Փորձագետ. «Թուրքիան միջուկային զենք կստեղծի 10-20 տարվա ընթացքում»
- 13:55 Արցախի ԱՆ-ն հրապարակել է պայթյունի հետևանքով վիրավորների անունները
- 13:50 Ազնավուրի թոյլտվությամբ «Հայր Գորիոն»-ի հայերեն թարգմանության շապիկին կադր է նրա մասնակցությամբ ֆիլմից
- 13:47 Սերժ Սարգսյանը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ
- 13:35 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվել են Ավագ հինգաբարձի արարողությունները
- 13:28 Փարաբարում առաջին Էկո-պուրակը կբացվի
- 13:25 «HALO Trust»-ը՝ Ղազախիում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ
- 13:04 Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջադառումներն այս տարի կանցկացվեն սեպտեմբերի 29-ին և 30-ին
- 12:53 Կառավարությունը բնակարան կնվիրի Սերժ Սարգսյանին
- 12:44 Մանե Թանդիլյանն առաջարկում է Եկամտահարկի վերադարձը կիրառել նաև ոչ նորակառուց բնակարանների ձեռքբերման դեպքում
- 12:40

Share | Tweet Աղբյուր՝ Panorama.am

Տեքստում սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև սեղմելով Ctrl-Enter: